ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ГОСУДАРСТВЕННАЯ СЛУЖБА
БЕЗОПАСНОСТИ ПИЩЕВЫХ ПРОДУКТОВ
МИНИСТЕРСТВА СЕЛЬСКОГО
ХОЗЯЙСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

"06" 07 2017
3050

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԿ-Ի
«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ՏԱԹԵՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ)

Ի պատասխան Ձեր 2017 թվականի հունիսի
29-ի ՀՀ վարչապետին հասցեագրված գրության

Հայտնում ենք Ձեզ, որ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով տնտեսավարող սուբյեկտի կամ արտադրանքի նկատմամբ սահմանափակման միջոցները կիրառվում են պետական վերահսկողության ընթացքում սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտումներ հայտնաբերվելու դեպքում:

Ներկայումս ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից շշալցված խմելու ջրի արտադրություններում, օրենքով սահմանված կարգով իրականացվում են վերահսկողության գործողություններ:

Վերոգրյալի հիման վրա և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Ձեր հարցմանը կպատասխանենք վերահսկողական գործառույթներն ավարտելուց հետո:

Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

Կատ.՝ Իրավաբանական վարչություն /
Հեռ.՝ 20-38-63 (136)

Կոմիտասի պող. 49/2, 0051 Երևան, ՀՀ
Пр. Комитаса 49/2, Ереван 0051, РА

Тел./факс: (+374 10) 20 38 53
Эл. почта: hs@ssfs.am
Веб-сайт: www.ssfs.am